

**ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՔ**

Լևոն ԴՈՒՆՈՒՅԱՆ

ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի
“Հանրային կառավարում” ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր. պետական մրցակցային քաղաքականություն, մրցակցային միջավայր, անբարեխիղճ մրցակցություն, տնտեսական համակենտրոնացում, գերիշխող դիրքի չարաշահում

Ձեռնարկատիրության և մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պետական կարգավորման սկզբունքի կիրառման տեսանկյունից նախևառաջ պետք է հստակ գիտակցել, որ ձեռնարկատիրության իրականացումը հիմնվում է որոշակի շահերի վրա՝ ինչպես մակրո, այնպես էլ միկրոնակարգակներում, այսինքն՝ ձեռնարկատիրական գործունեության իրականացումը ձեռնտու է և՛ պետությանը, և՛ հասարակությանը, որոշ վերապահումներով՝ նաև բոլոր ձեռնարկատերերին: Հասարակության կամ սպառողների տեսանկյունից որքան բարձր է մրցակցության աստիճանը, այնքան արտադրանքի գները ցածր են, կամ որակն է բարձր, ինչը ենթադրում է ձեռնարկատիրության *մրցակցության ապահովման գործառույթը*: Իսկ ձեռնարկատերերի տեսանկյունից ձեռնարկատիրությունը ձևավորում է խիստ և դինամիկ մրցակցային դաշտ, և եթե տվյալ տնտեսակարգը գործում է արդար և միասնական, բոլորի կողմից պահպանվող «խաղի կանոնների» ներքո, ապա այս տեսանկյունից՝ ձեռնարկատիրությունը և դրա իրականացման գործընթացը պետք է պաշտպանված լինի օրենքով, և ինքն էլ իր իրացման փուլում հարգի օրենքը, այսինքն՝ առկա է նաև *իրավական գործառույթ*¹:

Հարկ է նշել նաև, որ շուկայական տնտեսության պայմաններում մենաշնորհային դիրքի ձգտումը և վերջիններիս առաջացումն անխուսափելի երեվոյթ է, ինչը շատ դեպքերում կարող է օգտակար ազդեցություն ունենալ՝ ապրանքային շուկայում ապահովելով հավասարակշռություն: Այսինքն ոչ այնքան վնասաբեր է վերջինիս առաջացումը, այլ վերջինիս երկարաժամկետ բնույթը, որի պատճառով, հարկավոր է ոչ թե արհեստական ճանապարհներ

¹ Մ. Մելքունյան, Վ. Հակոբյան «Ձեռնարկատիրական գործունեության տեսամեթոդաբանական հարցերը և առանձնահատկությունները ՀՀ-ում», Հայաստան, ֆինանսներ էկոնոմիկա, # 8-9 օգոստոս-սեպտեմբեր, 2008, էջ 27-28:

րով ամեն կերպ վերացնել մենաշնորհային դիրք ունեցողին, այլ ակտիվորեն աջակցել և խրախուսել մրցակիցներին²:

Մեր երկրում ձևավորված անկատար շուկայական տնտեսության և մրցակցային միջավայրի առկայությունը, որպես կարգավորման հիմնախնդիրներ առաջ են քաշվել հայ տնտեսագետների կողմից, որոնք պետության կարգավորիչ դերի անհրաժեշտությունը հիմնավորում են հետևյալ գործոններով՝ շուկայական տնտեսության տարերայնություն, հասարակական և սոցիալական բարիքների պահանջարկի բավարարման առանձնահատկություն, պետական հատվածի առկայություն: Նույնիսկ ամենաազատական տնտեսություն ունեցող երկրներում պետության տնտեսական դերը պահպանվում է՝ պայմանավորված հասարակական ապրանքների արտադրության, շուկայական տնտեսության իրավական դաշտի ապահովման, մրցակցության պաշտպանության, տնտեսության մակրոտնտեսական կարգավորման և այլ անհրաժեշտությամբ: Պետությունը պարտավոր է հոգալ բնակչության կենսամակարդակի, զբաղվածության ապահովման, սոցիալական ոլորտների՝ առողջապահության, կրթության, մշակույթի վիճակի մասին, ամրապնդել պաշտպանունակությունը, կազմակերպել դրամաշրջանառությունը, բանկային և ֆինանսական գործունեությունը, երաշխավորել ձեռնարկատիրության ազատությունը, ուղղություն տալ տնտեսական և սոցիալական զարգացմանը³: Եվ ինչպես նշում է պրոֆ. Գր. Կիրակոսյանը տնտեսության մեջ որոշակի խնդիրների առկայության պարագայում պետության մասնակցությունը տնտեսական հարցերի կառավարմանը օբյեկտիվ անհրաժեշտություն է դարձել. մնում է պարզել, թե ինչ չափով պետք լինի այդ միջամտությունը⁴: Սակայն գտնել շուկայական ազատության և պետական կարգավորման օպտիմալ համակցման մակարդակը դեռևս չի հաջողվել, չկա միանշանակ մոտեցում, իսկ կոնկրետ իրավիճակներում օպտիմալ որոշում կայացնելու սկզբունքը պետք է լինի տնտեսական մրցակցության առավելագույն ապահովումը: Այս նույն սկզբունքով, ըստ պրոֆ. Ա.Մարկոսյանի, հակամենաշնորհային օրենսդրությունը պետք է դիտարկվի որպես ձեռնարկատիրության մշակույթի և գործարար միջավայրի կատարելագործման միջոց՝ հանգեցնելով մրցակցային գործընթացի խթանմանը: Ա. Մարկոսյանը մասնավորապես ընդգծում է, որ ազատ առևտրի ռեժիմը չի փոխարինում ար-

2 Մ. Մելքունյան, Ա. Առաքելյան «Ձեռնարկատիրական միջավայրի գնահատումը ՀՀ սննդի արտադրության ոլորտում», Հայաստան, ֆինանսներ էկոնոմիկա, # 3 մարտ, 2013թ., էջ 23:

³ Սուվարյան Յու., Կոպյան Վ., Տնտեսության հանրային կառավարում.

մեթոդաբանությունը և արդի հիմնախնդիրները, Եր.: ԱՌՏ, 2003թ., էջ 12:

⁴ Կիրակոսյան Գր., Անցումային տնտեսության վերափոխումները: Տեսության հարցեր, Եր., Տնտեսագետ, 2002թ., էջ 106:

դյունավետ հակամենաշնորհային քաղաքականությանը. այս երկու գործոնները հանդիսանում են մրցակցային քաղաքականության հիմնական մասերը⁵:

Մրցակցային միջավայրի կարգավորմանը և բարելավմանն ուղղված միջոցառումների ազդեցության հիմնական ուղղություններն են **շուկաների ազատականացումը, պետական կարգավորումը և հակամենաշնորհային օրենսդրությունը**: Շուկաների ազատականացման ազդեցությունն անուղղակի է, որի էությունը կայանում է նրանում, որ որքան արդյունավետ են շուկայական մրցակցային մեխանիզմները, այնքան մենաշնորհների ուժը թույլ է, ինչը կոթվարացնի կամ անշահավետ կդարձնի մենաշնորհային դիրքերի չարաշահումը: Հարկային, մաքսային դրույքաչափերի նվազեցումը, տարաբնույթ տնտեսական արգելքների վերացումը նպաստելու են ձեռնարկատիրական մրցունակ միջավայրի ձևավորմանը, պետական աջակցության ներքո ՓՄՁ-երը հավասար մրցակցային հարթության վրա են կանգնելու մենաշնորհային դիրք ունեցող կազմակերպությունների հետ: Մենաշնորհային դիրք զբաղեցնող ընկերությունների գործունեության պետական կարգավորումը, որպես մրցակցային միջավայրի ձևավորման պետական միջամտություն, իրեն արտահայտությունն է գտնում գների վերին սահմանների ամրագրման մեջ, ինչը առավել հաճախ կիրառվում է բնական մենաշնորհների դեպքում, որոնց շրջանակներում մատուցած ծառայությունները մրցակցային պայթարից դուրս են: Ի հարկե դա չի նշանակում, որ պետական կարգավորման գործիքները չեն կիրառվում նաև այն ոլորտերում, որտեղ մրցակցության առկայությունը հնարավոր է: Հակամենաշնորհային օրենսդրությունը, որպես այս տնտեսական չարիքի իրավական կարգավորման միջոց, գոյություն ունի գրեթե բոլոր երկրներում և հանդես է գալիս հիմնականում մենաշնորհների անմիջական արգելման, ճնշման կամ վերացման միջոցառումների միջոցով: Հակամենաշնորհային քաղաքականության հիմնական նպատակն են մենաշնորհների ձևավորումից ազատ մրցակցության պաշտպանությունն ու ապահովումը՝ իրականացնելով մենատերերի գործունեության սահմանափակում, փոքր ձեռնարկատիրությանն աջակցում և համագործակցում, սպառողների իրավունքների պաշտպանությունը⁶:

Հայաստանն, իր հերթին, շուկայական տնտեսության քաղաքականության սկզբունքներին համահունչ, մրցակցային միջավայրի բարելավման և

⁵ Մարկոսյան Ա., Տնտեսական մրցակցության պաշտպանությունը որպես ձեռնարկատիրության խթանման հիմք, Рынок капитала в Армении 2003, No23, 24 (129,130), էջ 4:

⁶ Ռ. Թումանյան «Տնտեսական մրցակցության պաշտպանության հիմնական ձևերը» Հայաստան, ֆինանսներ էկոնոմիկա, # 5 մայիս, 2008թ., էջ 13:

շուկայի պաշտպանության ոլորտում հանձն է առել իրականացնել կարգավորիչ մի շարք գործառույթներ, որոնք ուղղված են տվյալ ոլորտը կարգավորող գործող օրենսդրության պահպանման և վերահսկման առավել արդյունավետ լծակների ներդրմանը, իրավական դաշտի համապատասխանեցմանը միջազգային նորմերին, ոլորտում առկա խնդիրների վերացման առաջարկությունների մշակմանը, բարեխիղճ մրցակցային դաշտի ձևավորմանը և վերջապես հայրենական արտադրողների և սպառողների շահերի պաշտպանությանը⁷: Ըստ մրցունակության համաշխարհային զեկույցի «Գերիշխող դիրքերի ազդեցությունը մրցակցության վրա» ցուցանիշով՝ Հայաստանը 2013 թ. 144 երկրների շարքում զբաղեցրել է 79-րդ տեղը՝ անցած տարվա համեմատ բարելավելով դիրքը 3 կետով, ինչը վկայում է այս բնագավառում իրավական կարգավորման մեխանիզմների համալրման անհրաժեշտության մասին⁸:

Տնտեսական մրցակցության պաշտպանության և կարգավորման համակարգի ձևավորման ուղղությամբ առաջին քայլը մեր երկրում կարելի է համարել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի ընդունումը 2000 թ. նոյեմբերի 6-ին: Եվ քանի որ մրցակցային խնդիրները, որպես տնտեսության հակամենաշնորհային կարգավորման ուրույն բնագավառ, վերաբերվում են ինչպես **գերիշխող դիրքի չարաշահումներին, անբարեխիղճ մրցակցությանը, հակամրցակցային համաձայնություններին և համակենտրոնացումներին**, ապա միանգամայն պարզ է, որ այս շրջանակներում իրավական կարգավորման համար բացի վերը նշված օրենքի հարկավոր է ապահովել ընդհանուր տնտեսական օրենսդրական հիմքի կիրառումը:

Այսպիսով, ՀՀ շուկայական տնտեսության զարգացման և մրցակցային միջավայրի ձևավորման համար ամուր օրենսդրական հիմքերի ստեղծման և կատարելագործման նպատակով ԱՀԿ անդամակցությանը նախորդող շրջանում ի թիվս մյուս օրենքների ՀՀ կառավարությունը ընդունել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, որը կարգավորում է շուկայի մասնակիցների հարաբերությունները՝ կապված անբարեխիղճ մրցակցության տարբեր դրսևորումների հետ: Համաձայն օրենքի՝ ձևավորվել է տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, որի խնդիրներն են՝ տնտեսական մրցակցության պաշտպանությունը և խթանու-

⁷ Ա. Խարիբեկյան, Ա.Բեժանյան, «Խորհրդատվության և վերապատրաստման դերը ՀՀ ձեռներեցության զարգացման համակարգում», էջ 34-35

⁸ «Մրցակցություն և կարգավորում» Ամբերդ մատենաշար 2, հետագ. խմբի ղեկավար Մ.Մելքունյան, Եր, «Տնտեսագետ» 2014, էջ 8

մը, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ստեղծումը, հակամրցակցային գործունեության կանխումն ու սահմանափակումը⁹: Ներմուծողների կողմից մրցակցային չարաշահումների և ներքին շուկայի պաշտպանողական միջոցառումների կիրառման համատեքստում հարաբերությունները կարգավորվում են «Ներքին շուկայի պաշտպանության մասին» և «Հակազնազցման (հակադեմփինգային) և փոխհատուցման միջոցառումների մասին» (ընդունվել է 2002թ. հունիսի 19-ին) ՀՀ օրենքների համաձայն¹⁰:

Անբարեխիղճ մրցակցության դրսևորման ձևերի իրավական կարգավորումը ևս ենթադրում է ոչ միայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կիրառումը, այլև «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին», «Ապառողների իրավունքների պաշտպանության մասին» և «Գովազդի մասին» օրենքները, ինչպես նաև այն հիմնվում է էթիկական նորմերով, որոնք պայմանավորված են մեր երկրում տիրող գործարար շրջանառության նորմերով¹¹:

Գերիշխող դիրքի չարաշահումը հակամենաշնորհային օրենսդրության ամենախրթին բնագավառներից է, որի պատճառներից մեկն այն է, որ չարաշահման տեսակները բազմաբնույթ են, ինչպես նաև այն հանգամանքը, որ գերիշխող դիրքին հասնելը կարող է նաև օրինական լինել (օրինակ՝ նորմուծության, ավելի արդի տեխնոլոգիաների կիրառման և այլնի հետևանքով), հետևաբար պետք է բավականին զգուշորեն մոտենալ այս հարցին արդյունավետ գործարար սովորույթներին չխոչընդոտելու նպատակով: Եթե ուսումնասիրության ընթացքում պարզվում է, որ տնտեսավարող սուբյեկտը չունի մրցակից կամ չի հանդիպում որևէ էական մրցակցության, հնարավորություն ունի որոշիչ ազդեցություն ունենալու տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա կամ իրացման (ձեռքբերման) ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն 1/3-ը, համարվում է գերիշխող դիրք ունեցող: Նույն այս սկզբունքով, եթե հաստատվում է, որ ապրանքային շուկայում իրացման (ձեռքբերման) առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսավարող սուբյեկտներ միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը (երեք տնտեսավարողների դեպքում

⁹ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, Գլուխ 6, հոդված 18 <http://www.arlis.am/>

¹⁰ «Ներքին շուկայի պաշտպանության մասին» և «Հակազնազցման (հակադեմփինգային) և փոխհատուցման միջոցառումների մասին» ՀՀ օրենքներ, <http://www.arlis.am/>

¹¹ Ա.Գրիգորյան «Գերիշխող դիրքի չարաշահումների, անբարեխիղճ մրցակցության, հակամրցակցային համաձայնությունների և համակենտրոնացման գործընթացների կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» Հայաստան, ֆինանսներ էկոնոմիկա, # 6, մայիս, 2006թ., էջ 58:

շուկայի գրավման սահմանաչափը պետք է լինի առնվազն երկու երրորդը), ապա վերջիններս համարվում է գերիշխող դիրք ունեցող¹², և գրանցվում գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում:

Մասնագիտական գրականության մեջ գերիշխող դիրքի չարաշահումները բաժանվում են երկու հիմնական խմբի.

- Շուկան «շահագործող» չարաշահումները տեղի են ունենում այն ժամանակ, երբ սուբյեկտն իր շուկայական իշխանությունը օգտագործում է սպառողներից բարձր գին գանձելու, սպառողների միջև խտրականություն դնելու, մատակարարներին ցածր գներ վճարելու և համանման այլ գործողությունների համար:

- «Բացառող» չարաշահումների դեպքում սուբյեկտը խափանում է մրցակցությունը: Այս տեսակետից «բացառող» չարաշահումները ավելի վնասակար են հասարակության համար: Այս տեսակի չարաշահումներից են մրցակցի հետ տնտեսական կապերի խզումը, նրա հետ գործարքի մեջ չմտնելը, մրցակցի ծախսերի բարձրացումը տվյալ շուկա մուտք գործելու համար կամ «դեմպինգային» գների սահմանումը¹³:

Ըստ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ գերիշխող դիրքի չարաշահումն առաջացնում է տուգանքի նշանակում հինգ միլիոնից երկու հարյուր միլիոն դրամի չափով, իսկ գների չհիմնավորված բարձրացման միջոցով գերիշխող դիրքի չարաշահմամբ տնտեսավարող սուբյեկտի ստացած շահույթը (եկամուտը) Հանձնաժողովի որոշմամբ ենթակա է գանձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Մրցակցային միջավայրի օրենսդրության մեջ ուրույն տեղ է զբաղեցնում **անբարեխիղճ մրցակցության** իրավական կարգավորումը: Ըստ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ի՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում ձեռնարկատիրական գործունեության ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է այդ օրենքին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է մրցակիցների միջև կամ վերջիններիս ու սպառողների միջև բարեխղճու-

¹² «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված

¹³ Ա.Գրիգորյան «Գերիշխող դիրքի չարաշահումների, անբարեխիղճ մրցակցության, հակամրցակցային համաձայնությունների և համակենտրոնացման գործընթացների կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում» Հայաստան, ֆինանսներ էկոնոմիկա, # 6, մայիս, 2006թ., էջ 55:

թյան՝ ազնվության, արդարության, ճշմարտության, անաչառության սկզբունքները: Անբարեխիղճ մրցակցությունը հաճախ որակվում է որպես իրավախախտում, իսկ խախտումների դեպքում կիրառվում են պետական հարկադրման երկու հիմնական տեսակ՝ իրավաբանական պատասխանատվություն և պաշտպանություն: Պաշտպանության միջոցները ներառում են իրավախախտման ժամանակ հասցված վնասի վերացումը, պարտականությունների կատարման ապահովումը, իսկ պատասխանատվության միջոցների թվին են պատկանում տուգանքային պատժամիջոցները (անբարեխիղճ մրցակցության գործողության համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ նշանակվող տուգանքի չափը կազմում է տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև մեկ տոկոս¹⁴):

Հաջորդը հանրային մեծ վտանգ ներկայացնող *հակամրցակցային համաձայնություններն* են, որոնք հիմնականում կնքվում են գների բարձրացման, արտադրության ծավալների կրճատման, ապրանքների առաջարկի արհեստական նվազեցման, արտադրանքի որակական բնութագրիչների կատարելագործման սահմանափակման, մատակարարման կամ իրացման հատուկ պայմանների պարտադրման, առաջարկվող արտադրանքի զանազանեցման արգելակման, մատակարարման կամ իրացման կետերի ընտրության սահմանափակման և այլ նպատակներով¹⁵:

ՀՀ մրցակցային օրենսդրության համաձայն, հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) համար նշանակվող տուգանքի չափը կազմում է հինգ միլիոնից երկու հարյուր միլիոն դրամ, իսկ Հակամրցակցային համաձայնություն կնքելու (կայացնելու, այդ համաձայնությանը մասնակցելու) միջոցով գների չհիմնավորված բարձրացման հետևանքով տնտեսվարող սուբյեկտի ստացած շահույթը (եկամուտը) Հանձնաժողովի որոշմամբ ենթակա է գանձման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե¹⁶:

Շուկայում գերիշխող դիրքի գրավման, ազդեցության ուժեղացման պատճառներից կարող է հանդիսանալ *տնտեսական համակենտրոնացումը*, ինչը առողջ մրցակցային միջավայրի ձևավորման գլխավոր խոչընդոտներից մեկն է: Այն նպատակ են հետապնդում խոչորացնելով արտադրությունը՝

¹⁴ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ կետ:

¹⁵ Ա. Հակոբյան «Հակամրցակցային համաձայնությունների բացահայտման արդի հիմնախնդիրները», Հայաստան, ֆինանսներ էկոնոմիկա, #4-5, մարտ-ապրիլ, 2009թ., էջ 21:

¹⁶ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետ:

մասշտաբի դրական հատույցի շնորհիվ նվազեցնել արտադրության ծավալը՝ ավելացնելով միավոր արտադրանքի իրացումից ստացվող շահույթը, ինչը վերջին հաշվով կարող է հանգեցնել շուկայում գերիշխող դիրքի, որից բխող նաև չարաշահման հնարավորությունների ստեղծմանը¹⁷: Մինչ համակենտրոնացման ռիսկ պարունակող գործարքի կայացումը, անհրաժեշտ է գնահատել մրցակցային դաշտի վրա վերջինիս համակենտրոնացման հնարավոր ազդեցության մակարդակը, և հակամրցակցային պետական մարմնի կողմից կանխվեն վտանգ ներկայացնող դեպքերը: Ինչպես հակամրցակցային համաձայնությունները, այնպես էլ տնտեսական համակենտրոնացումները նույն սկզբունքով լինում են հորիզոնական և ուղղահայաց՝ կախված մասնակցություն ունեցող տնտեսվարողների փաստացի կամ պոտենցիալ մրցակիցներ լինելու, արտադրական շղթայի միևնույն կամ տարբեր մակարդակներում գտնվելու հանգամանքից¹⁸: Իսկ կոնզոլմերատ համակենտրոնացումները տեղի են ունենում այն ձեռնարկությունների միջև, որոնք չեն արտադրում մրցակցային արտադրանք և ոչ էլ գնորդ-վաճառող փոխհարաբերության մեջ են:

ՀՀ օրենսդրության համաձայն համակենտրոնացումը չհայտարարագրելու կամ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է համակենտրոնացման մասնակից տնտեսվարող սուբյեկտի՝ համակենտրոնացմանը մասնակցելուն նախորդող տարվա հասույթի մինչև չորս տոկոս, բայց ոչ ավելի, քան հինգ հարյուր միլիոն դրամ¹⁹:

Փորձենք ներկայացնել 2013թ-ի Հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքի արդյունքները, որոնք հիմնականում ուղղված են եղել մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող գործողությունների կամ վարքագծի ուսումնասիրությանը, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման հնարավոր դեպքերի քննարկմանը և որոշումների ընդունմանը, վերջինիս պահպանման նկատմամբ վերահսկո-

¹⁷ Տ.Հովեյան «Տնտեսական համակենտրոնացումները Հայաստանում Եվրամիության մրցակցային «լույսի» ներքո», Հայաստան, ֆինանսներ էկոնոմիկա, #4 /81/, ապրիլ, 2007թ., էջ 34:

¹⁸ Հորիզոնական համակենտրոնացումները տեղի են ունենում երկու ձեռնարկությունների միջև, որոնք փաստացի կամ պոտենցիալ մրցակցիներ են, այսինքն՝ նրանք վաճառում են նույն ապրանքատեսակը կամ շատ մոտ փոխարինողներ: Ուղղահայաց համակենտրոնացումները վերաբերում են արտադրական շղթայի տարբեր մակարդակներում գտնվող ձեռնարկություններին, որոնք ունեն փաստացի կամ պոտենցիալ գնորդ-վաճառող փոխհարաբերություն:

¹⁹ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետ

ղություն իրականացմանը՝ հատուկ ուշադրություն է դարձվել սոցիալական նշանակություն ունեցող ապրանքային շուկայի վրա ազդեցություն ունեցող մրցակցային խնդիրներին:

Հանձնաժողովի կողմից իրականացվել է մի շարք ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն, որոշվել և գնահատվել է ապրանքային շուկաների կենտրոնացվածության աստիճանը, դրանցում մասնակից տնտեսվարող սուբյեկտների թիվը, գերիշխող դիրքի առկայությունը: Հանձնաժողովը 2013 թվականի ընթացքում ընդունել է 417 որոշում: Հարուցվել է շուրջ 182 վարչական վարույթ, որից 122-ը՝ Հանձնաժողովի սեփական նախաձեռնությամբ, իսկ 60-ը՝ համապատասխան դիմումների հիման վրա: Հանձնաժողովի կողմից ընդունվել են 144 պատասխանատվության միջոցներ սահմանող որոշումներ: Ընդունված պատասխանատվության միջոցների որոշումներից 63-ն առնչվում են անբարեխիղճ մրցակցությանը, 3-ը՝ գերիշխող դիրքի չարաշահմանը, 4-ը՝ համակենտրոնացումներին և 2 որոշում վերաբերում է 8 տնտեսվարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնություններին: Օրենքի խախտման համար շուրջ 31 տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվել է առավել խիստ պատժաչափ՝ տուգանք, իսկ շուրջ 113 տնտեսվարողի նկատմամբ՝ նախազգուշացում: Նշանակված տուգանքների գումարը կազմել է 126 մլն դրամ, մասնավորապես. 10 մլն դրամ՝ գերիշխող դիրքի չարաշահման երևույթների, 57 մլն դրամ՝ բացահայտված անբարեխիղճ մրցակցության դրսևորումների, 45 մլն դրամ՝ հակամրցակցային համաձայնությունների և 14 մլն դրամ՝ Հանձնաժողովի կողմից պահանջվող տեղեկատվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու համար:

Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում են եղել 57 պարենային ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող 62 տնտեսվարող սուբյեկտ, ոչ պարենային 73 ապրանքային շուկաներում գործող 45 տնտեսվարող սուբյեկտ, դեղերի 17 շուկաներում գործող 11 տնտեսվարող սուբյեկտ: Հանձնաժողովը պարբերաբար իրականացրել է դիտանցում՝ գերիշխող դիրք ունեցող առևտրային ցանցերում առաջին անհրաժեշտության մի շարք ապրանքների մանրածախ գների փոփոխության հիմնավորվածությունը ստուգելու և օպերատիվ տեղեկատվություն ստանալու նպատակով: Հարկ է նշել, որ նմանատիպ հսկողություն է իրականացվել գերիշխող դիրք ունեցող 8 պարենային ապրանքների առևտրային ցանցերի, 5 բենզալցակայանների ցանցերի, 9 դեղատների ցանցերի, 4 սալիկների ու սանիտարական տեխնիկայի, 5 էլեկ-

տրատեխնիկայի, 5 կահույքի, 4 շինանյութերի և ջեռուցման համակարգերի առևտրային ցանցերի նկատմամբ²⁰:

Կարծում ենք, հակամրցակցային համաձայնությունների, համակենտրոնացումների և այլ անառողջ մրցակցության դրսևորումների դեմ պայքարի գործում արդյունավետ համակարգի ներդրման և կիրառման անհրաժեշտությունը պետք է բխի առաջին հերթին հասարակության շահերից, որի իրագործման հիմնական մեթոդներից մեկը պետք է հանդիսանա պատժիչ գործառույթներից աստիճանաբար կանխարգելման գործառույթին անցնելը: Ընդ որում՝ կանխարգելիչ արդյունք ապահովելու համար պատժամիջոցները պետք է գերազանցեն ակնկալվող շահույթի մակարդակը, քանի որ հակառակ պարագայում տվյալ միջոցը կորցնում է պատժամիջոցի հատկանիշները՝ չկատարելով ո՛չ կանխարգելիչ, և ո՛չ էլ պատժիչ գործառույթներ: Որպես կանխարգելիչ գործառույթ, բացի պատժամիջոցների չափից, պետք է կարևորվի իրավախախտման բացահայտման և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու հավանականությունը: Այս ամենը ենթադրում է, որ շուկայական տնտեսության բնական հատկությունը հանդիսացող մրցակցությունը ինքնակարգավորման տարերային հատկություններից պետք է որոշակի չափով ձերբազատել, ապահովելով շուկայում «խաղի կանոնների» անհրաժեշտ կարգավորումը, միաժամանակ հստակեցնելով մրցակցային քաղաքականության գերակայությունները, ապահովելով մրցակցային պաշտպանության արդյունավետ երաշխիքներ, երաշխավորի սպառողների շահերի արդյունավետ պաշտպանությունը, ինչպես նաև հռչակի մասնավոր սեփականության գերակայությունը:

²⁰ ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության Հանձնաժողովի գործունեության 2013թ. տարեկան հաշվետվություն, էջ 4-6:

Լևոն ԴՈՒՆՈՒՅԱՆ

Մրցակցային միջավայրի կարգավորումը՝ որպես ձեռնարկատիրության զարգացման հիմք

Բանալի բառեր՝ պետական մրցակցային քաղաքականություն, մրցակցային միջավայր, անբարեխիղճ մրցակցություն, տնտեսական համակենտրոնացում, գերիշխող դիրքի չարաշահում

Ներկայացված հոդվածում հեղինակը հետազոտել է մրցակցության զարգացման պետական քաղաքականության իրագործման հիմնական ասպեկտները, հիմնախնդիրները, տեսությունը և պրակտիկան: Դիտարկվել են մրցակցության զարգացման պետական աջակցության առաջնային ուղղությունները, որպես շուկայական տնտեսության կարգավորման գործառույթներ, վերջիններիս իրագործման արդյունքները և դերը ձեռնարկատիրության խթանման գործում:

Levon DOKHOLYAN

Regulating competitive environment - as a basis for the development of entrepreneurship

Keywords: the state competitive policy, competitive environment, unfair competition, economic concentration, abuse of dominant position

In presented article the author explored the theory and practice, problems and the basic aspects of the implementation of public policies to promote competition. Considered priorities of the state support the development of competition as a function of regulation in a market economy, the results of their implementation and the role in the development of entrepreneurship.

Левон ДОХОЛЯН

Регулирование конкурентной среды – как основа развития предпринимательства

Ключевые слова: государственная конкурентная политика, конкурентная среда, недобросовестная конкуренция, экономическая концентрация, Злоупотребление доминирующим положением

В представленной статье автором анализируется теория и практика, проблемы и основные аспекты реализации государственной политики по развитию конкуренции. Рассматриваются приоритетные направления государственной поддержки развития конкуренции, как функция регулирования в условиях рыночной экономики, результаты их реализации и роль в развитии предпринимательства.